

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 22

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 3-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին՝ Ն. Անդրեասյանը, Ա. Զաքարյանը, Տ. Գալստյանը, Ա. Խաչատրյանը, Վ. Մկրտչյանը, Կ. Շահազիզյանը, Ս. Շուխյանը, Ն. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ աշխատակազմի բաժինների պետեր Ա. Մնացականյանը և Շ. Վահանյանը, ինչպես նաև Աշտարակ համայնքի բնակիչ Հ. Գևորգյանը:

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

4. Աշտարակի համայնքապետարանի շենքի երրորդ հարկից <<Արագածոտն>> ջրօգտագործողների ընկերությանը վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

5. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

6. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

7. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

9. Աշտարակ քաղաքի Ս. Շահազիզի փողոցի N 142 տան դիմացի ծառի հատում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

/1/ Օրակարգը հաստատվել է 10 - ԿՈՂՄ ձայներ ստանալով:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Աշտարակ համայնքի 2018 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը: Ձեկուցողը նշեց, որ աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նաև 2018թ. բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու, ծախսային մասն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է տարեկան բյուջեում կատարել փոփոխություններ:

Ձեկուցողին հարցեր ուղղեց Ս. Օվոյանը, վերջինիս, մասնավորապես, հետաքրքրում էր, թե ինչի հետ են կապված առաջարկվող փոփոխությունները և արդյոք կատարվելիք փոփոխությունները չեն խախտի բյուջեի կողմից ֆինանսավորվող ծախսերի համամասնությունը:

Շ. Վահանյանի կողմից բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

9-ԿՈՂՄ, 1-ՁԵՆՈՂԱԿ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափը հաստատելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներով, հաստատել Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, Տ. Գալստյանը, Կ. Շահազիզյանը, որոնց Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Աշտարակի համայնքապետարանի շենքի երրորդ հարկից <<Արագածոտն>> ջրօգտագործողների ընկերությանը վարձակալությամբ տարածք տրամադրելու մասին

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քարտուղար Ս. Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Աշտարակի համայնքապետարանի վարչական շենքի երրորդ հարկից 16քմ տարածք, տարեկան 17 000 /տասնյոթ հազար/ ՀՀ դրամ վարձավճարով <<Արագածոտն>> ջրօգտագործողների ընկերությանը վարձակալությամբ տրամադրելու վերաբերյալ:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին և ելույթներով հանդես եկան Տ. Գալստյանը, Ս. Օվոյանը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը, իսկ բարձրացված հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Ձեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը և առաջարկեց թույլատրել համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի և գյուղատնտեսական նշանակության Աշտարակ համայնքի Երևանյան փողոցում, Արայի տեղամասում և Երևան-Գյումրի մայրուղու հարակից տարածքում գտնվող հողամասերն աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու համար: Միաժամանակ առաջարկեց հաստատել նշված հողամասերի վաճառքի մեկնարկային գները:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, որոնց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանի և զեկուցող Ա. Մնացականյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 6 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Ա. Մնացականյանը և առաջարկեց ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, թույլատրել կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Գեղամ Վարդանյանին 106-001 ծածկագրից 6.9քմ հողամասը տրամադրելու 50 /հիսուն/ տարի ժամկետով՝ տարեկան 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ վճարով:

Ձեկուցողին հարցեր ուղղեցին Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը, Վ. Մկրտչյանը, որոնց համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

10- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 7 - Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ Արմեն Մնացականյանը և առաջարկեց հիմք ընդունելով Արաքսյա Այվազյանի լիազորված անձ Վահե Հարությունյանի դիմումը և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող 02-001-0001-0094 ծածկագրով Արաքսյա Այվազյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0472հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի /խաղողի այգի/ նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Ձեկուցողին հարցեր ուղղեց և ելույթով հանդես եկավ Ս. Օվոյանը:

Բարձրացված հարցերին սպառիչ պատասխաններ տրվեցին զեկուցողի կողմից:

9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ: ՍՈՒՅՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ Տ. ԳԱԼՍՅԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության հողամասն ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Հաջորդ հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը: Ձեկուցողը առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը և ղեկավարվելով Հողային օրենսգրքի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. թիվ 550-Ն որոշման պահանջները, համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի N77/1 հասցեում գտնվող 20քմ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով օտարել հողամասին կից՝ Տիգրան Մեծի N 77 հասցեում գտնվող, ընդլայնվող հասարակական նշանակության օբյեկտի սեփականատիրոջը:

9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ: ՍՈՒՅՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ Տ. ԳԱԼՍՏՅԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Աշտարակ քաղաքի Ս. Շահազիզի փողոցի N 142 տան դիմացի ծառի հատում կատարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգի վերջին հարցը ևս ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանը:

Ձեկուցողն առաջարկեց, հիմք ընդունելով կատարված ուսումնասիրությունները, ինչպես նաև քաղաքացիների անվտանգ տեղաշարժը Աշտարակ համայնքի նշված փողոցով ապահովելու անհրաժեշտությունը, համաձայնություն տալ Ս. Շահազիզի փողոցի 142 հասցեում գտնվող տան դիմացի՝ իրենից վտանգ ներկայացնող ծառը կտրելու համար:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց նաև համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

9- ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ: ՍՈՒՅՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ Տ. ԳԱԼՍՏՅԱՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2018 թվականի նոյեմբերի 3-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն